ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՎ*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՄՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ՍԱԹԵՆԻԿ ԵԳՈՐՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾՈՎԱՄԱՐԻ ԲԱԽՏԻԲԵԿ ՄՈՒՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ*

Ք. Մարտունի

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ---------- 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------2

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ---------- 5

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1 ---------- 9

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2 ---------- 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 15

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԴԱՍԱՊԼԱՆ 1 ---------- 16

ԴԱՍԱՊԼԱՆ2 ---------- 18

ԹԵՍՏ ---------- 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց լեզուն, գրականությունը և օտար լեզուները միասին վերցրած կազմում են բանասիրության հանրակրթական ոլորտը, որոնք շփման և հաղորդակցման կարևորագույն միջոց են, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխազդեցության ամենակարևոր նոլորտն են:

Հայ գրականությունը, որպես ուսումնական առարկա նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում է նրանց ճանաչողական կարողությունները, լեզվամտածողությունը, խոսքը:

Գրականությունը, որպես լայն իմաստով խոսքի արվեստ, ընդգրկում է թե՛ բանավոր գեղարվեստական խոսքը՝ բանահյուսությունը, թե՛ գրավոր գեղարվեստական ստեղծագործությունը՝ բուն իմաստով գրականություն: Սովորելով գրականություն՝ աշակերտները նախնական պատկերացումներ են ձեռք բերում մեր լեզվի մշակութային արժեքների և հայ ազգի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, սովորույթներ, որոնցով տարբերվում է օտար ժողովուրդներից, ինչը նպաստում է երեխաների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայմանը, այնպես էլ մայրենի լեզուն մյուս լեզուներից ավելի լավ հասկանալուն ու գնահատելուն:

Գրականության տրապետումը նպաստում է նաև կոնկրետ պատկերացումներ ունենալ պատմությունից, աշխարհագրությունից, ինչպես նաև օտար լեզուներից:

Գրականությունը ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում է հաղորդակցման և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, սովորողի մեջ ձևավորում է լեզվական նորմերի ընկալումը և պատվի ու պատասխանատվության, արժանապատվության գիտակցմանը, ինչպես նաև աջակցում և նպաստում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Եվ այս ամենը նպաստում է դպրոցականների լեզվաբանական և գեղարվեստական կրթության հիմունքների ձևավորմանը:

Գրականության հետ շփումը կարգավորում է անհատի-սովորողի վարքը, խթանում և նպաստում է այս կամ այն խոսքային գործունեությունը, փոխհարաբերությունը, համագործակցությունը: Այն նպաստում է սովորողի անձնավորության իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությանը: Ստեղծում է

աշակերտի մոտ որոշակի արժեքային «կողմնորոշումների», հայացքների և համոզմունքների ձևավորման դաշտ, և այդ դաշտը ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների, խոսքային կարողությունների զարգացմանը, ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպանման և փոխանցման միջոցով:

Գրականության և լեզվական կրթության ուսուցման առանձնահատկություններն են.

- ✓ **Միջառարկայնությունը** –գրականությունից ձեռք բերած գիտելիքները տարբեր առարկաներից՝ արվեստից, մաթեմատիկայից, պատմությունից, աշխարհագրությունից, հայոց լեզվից և այլն:
- ✓ **Միջմշակութայնությունը** - հնարավորություն է տալիս դպրոցականին իրավահավասար գործընկեր լինել հայ և օտար գրականության լեզվով միջմշակութային հաղորդակցության գործընթացում
- ✓ **Բազմամակարդակությունը** – ձևավորել հմտություններ հայեցի, գրագետ գրելու, կարդալու, խոսելու, ունկնդրելու, հաղորդակցվելու
- ✓ **ՄԻջառարկայական ինտեգրում** – Հայոց լեզվով օտարազգի հեղինակների գործերի ընթերցումը և մյուս առարկաների ինտեգրումը և միջառարկայական կապերը նպաստում են սովորողների կողմից աշխարհի և երևույթների միասնական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների և գաղափարների համադրելը
- ✓ Բազմագործառնությունը – կարող է հանդես գալ և՛ որպես ուսուցման նպատակ, և՛ որպես միջոց ձեռք բերել գիտելիքներ տարբեր բնագավառներից:

  Գրականության ուսուցման հիմնական նպատակներն են.
- ✓ Յուրաքանչյուր սովորողների համար պարտադիր գիտելիքների ցանկ
- ✓ Լեզվական յ կարողությունների և հմտությունների տիրապետում և; կյանքում կիրառելու հմտություն, և գրագետ ու զարգացած դրսևորվելու միջոց
- ✓ Սովորողների հոգևոր և մշակութային ոլորտի զարգացում
- ✓ Ընդլայնել սովորողների գրագետ հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները

Նպաստում է սովորողի գեղագիտական և գեղարվեստական ճաշակի ձևավորմանը:

Գրականության ուսուցման հիմնական հեռանկարային նպատակը սովորողներին ազգասիրության ու ազգապահպանության, բազմազգ և բազմամշակութային,

ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելն է:

Քանի որ տարրական և միջին դպրոցի V – VI դասարաններում ժամաքանակը բավարարում է թեմայի յուրացմանը, ապա VII դասարանից սկսած աշակերտների համար մի փոքր դժվար է ամբողջովին յուրացնել գրականության ուսումնական ծրագրերը, հատկապես միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների համար, այդ իսկ պատճառով ես որոշեցի իմ դասաժամերին այդ աշակերտների համար կիրառել տարբերակված ուսուցում մեթոդը՝ պահպանելով նրանց ներգրավվածությունը գրականության դասաժամերին: Այն աշակերտները, որոնք հետ են մնում կրթական ծրագրերից և ունեն խնդիր դասապրոցեսին մասնակցելու՝ նրանք կաշխատեն անհատական տեքստային առաջադրանքների վրա՝ զարգացնելով գրելու, հիշելու հմտությունները, ճիշտ ու գրագետ բառերի արտասանությունը և կցուցաբերեն հետաքրքրություն առարկայի հանդեպ: Հայեցի և արժանապատիվ քաղաքացի ձևավորելու ճանապարհին:

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ներկա ժամանակներում՝ ժամանակակից դպրոցներում լայնորեն կիրառում են տարբերակված ուսուցումը՝ որպես նորարարություն, որը հնարավորություն է տալիս բարելավել յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները՝ իր ունակությունների, շահերի և հնարավորությունների սահմաններում: Տարբերակված ուսուցումը կիրառում են ոչ միայն այն դեպքում, երբ սովորողներին առանձնացնում են ըստ րենց ունակությունների, այլ նաև այն դեպքում, երբ նրանք չեն կարողանում լիովին յուրացնել ուսում,նական նյութը դասարանին համապատասխան ծրագրով:

Ուսումնառությունը կազմակերպեկիս պետք է հաշվի առնել ուսումնառության ոճերը: Օրինակ՝ արվեստի և մաթեմատիկական ուղղվածություն ունեցող աշակերտներին խնդրեցի վերարտադրել տարբեր տառատեսակներով և գույներով թվեր, հեղինակների ծննդյան և ստեղծագործական տարեթվերը: Մաթեմատիկները վերարտադրեցին միայն թվերը, իսկ արվեստագետնբերը՝ գույները և տառատեսակները: Դա է պատճառը, որ նյութը հաղորդելիս պետք է ընտրել տարբեր գործիքները (Զարենսկի Վ. Կ, Մոսկվա):

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը հնարավորություն ունի ճիշտ ձևով կազմակերպել դասապրոցեսը՝ հաշվի առնելով սովորողի ընդունակությունները և դասապրոցեսի բոլոր էլեմենտները: Տարբերակված ուսուցումը կարելի է կազմակերպել երկու եղանակով՝ խմբային և անհատական: խմբային տարբերակման ժամանակ սովորողները առաջադրանքները լուծում են երեք-չորս հոգով (խմբերով), իսկ երկրորդ դեպքում՝ աշխատում են անհատապես: Երկու դեպքում էլ սովորողին տրվում է հետադարձ կապ՝ մի դեպքում խմբի համար, իսկ մյուս դեպքում ստուգվում է յուրաքանչյուր սովորողի, աշակերտ աշխատանքը (Կլիմովա Ն. Վ. 2009):

Տաբերակված ուսուցման նպատակները

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր դասարան կարելի է բաժանել չորս տիպաբանական՝ A, B, C և D խմբերի, որը խմբերի կամայական անունն է (Կլիմովա Ն. Վ. 2009):

A խմբում սովորում է բացառիկ «օժտված տաղանդավոր» երեխաները:

B խմբում՝ լավ գիտելիքներ և առաջադիմություն ունեցող աշակերտները:

Այս երկու խմբերի համար տարբերակված ուսուցումն ունի հետևյալ նպատակները

- Գիտելիքների խորացում
- Բարդ խնդիրներ լուծելու հմտության զարգացում
- Անհատական հմտությունների զարգացում
- Գեղարվեստական գրականության ընթերցում և վերլուծություն
- Գիտական գրականությունից ինքնուրույն օգտվելու զարգացում

C խմբում սովորում են բավարար գիտելիքներ ունեցող աշակերտներ, իսկ D խմբում՝ նվազագույն շեմը չհաղթահարողներ երեխաները: D խմբի համար տարբերակված ուսուցման նպատակներն են(Կլիմովա Ն. Վ. 2009).

- Կրկնություն, նոր թեմայի յուրացում՝ հաջորդ աշխատանքը գրելու նպատակով
- Աշխատանքային հմտությունների զարգացում, ինքնուրույն աշխատելու հնարավորություն
- Նվազագույն գիտելիքնբերի յուրացման շեմը ներկայացնելու հմտության դրսևորում
- Վերարտադրել սովորածը կամ լուծված առաջադրանքը
- Խաղերի օգնությամբ հետաքրքրության առաջացում, թիմի աշխատանքներին ակտիվ մասնակցություն, տրամաբանական առաջադրանքների ինքնուրույն լուծում:

Տարբերակված ուսուցման դրական և բացասական կողմերը

Ուսուցման և դաստիարակության գործընթացում տարբերակված ուսուցումը ունի իր և՛ լավ, և՛ վատ ազդեցությունը սովորողների վրա (Զինուդին Ա. Ա. 2004):

Աշակերտների տարբերակումը ուժեղ, միջին և թույլ առաջադիմություններ ունի ոչ միայն առավելություններ, այլ նաև մեծ թերություններ: Հագեցած դասերը, կահավորված դասասենյակները, ծանր ուսումնական նյութերը խթանում և զարգացնում են շնորհաշատ աշակերտներին, իսկ այն աշակերտները, որոնք ունեն դանդաղ աշխատանքի և զարգացման տեմպ այս պարագայում սովորելու ցանկությունը կորցնում են, և

ուսումնառության գործընթացը դառնում է ծանր պարտականություն: Ի. Ս. Յակիմանսկին կարծում էր, որ ուսուցման սկզբնական շրջանում անհրաժեշտ է ստեղծել երեխայի զարգացման համար այնպիսի միջավայր և պայմաններ, որտեղ նա իրեն կդրսևորի լավագույնս՝ իր կարողությունների բոլոր կողմերով և 7-8-րդ դասարաններում, երբ մայրենին բաժանվում, է հայոց լեզվի և գրականության ու հստակ երևում է յուրաքանչյուր սովորողի ընդունակությունները, ուստի այդ դասարաններից կարելի է կիրառել տարբերակված ուսուցում՝ տարբեր մակարդակներով:

Նմանատիպ աշխատանք կատարելու համարայստեղ ի հայտ են գալիս մի շարք այլ խնդիրներ: Միևնույն դասարանում տարբեր ընդունակությունների և առաջադիմության տեր աշակերտների հետ աշխատելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի.

- Երեխայի մասնակցությունը ուսումնական դասընթացին. արդյոք շա՞տ են բացակայել դասերից:
- Ինչպիսի հաջողություններ է գրանցել երեխան ուսումնառության մեջ (Զինուդին Ա.Ա. 2004)
- Անցյալ տարի տվյալ առարկան նույն թե՞ տրաբերն դասարաններում է սովորել երեխան:

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը ուշադրության կենտրոնում է պահում սովորողների իրավունքների ու ազատության , պատվի ու արժանապատվության կարևորագույն հարցը, ինչպես նաև ուշադրության կենտրոնում է պահում միջին առաջադիմության տեր երեխաներին՝ ուժեղների նկատմամբ կիրառելով տարերակված ուսուցում, անհաղթահարելի խնդիր է առաջանում թույլերի նկատմամբ: Տարբերակված ուսուցումը խնդիր չի լինի եթե երեխան տարրական դպրոցից սկսած սովորի միևնույն առաջադիմության տեր խմբի աշակերտների հետ, իսկ մնացածը մեկ ուրիշ՝ իրեն ընդունակությունների համապատասխան երեխաների խմբում: Այս պարագայում նրանցից յուրաքանչյուրն իրեն լավ կզգա իր նմանների մթնոլորտում և չի լինի երեխայի – սովորողի եսի խնդիրը /Զինուդին Ա.Ա.2004/:

Հաշվի առնելով կրթական կարիքները, սովորողների համար տարբերակված ուսուցումը իրականացնում են նաև կազմակերպչական ռազմավարությունից ելնելով, միևնույն ունակությունները տեր աշակերտներին նույն հոսքում ուսուցանելով (Յու. Ամիրջանյան 2005): Այս տարբերակումների, խմբավորումների իմաստը ընդհանուր ունակությունների

գաղափարն է: Այսպես օրինակ արտասահմանյան շատ երկրներում կան թեքումով դպրոցներ (օրինակ՝ լեզուների թեքումով դպրոց, որտեղ խորացված ուսումնասիրում են տարբեր օտար լեզուներ): Արտասահմանյան երկրներում տարբերակված ուսուցման հիմքում ընկած է այն պնդումը, որ մարդու ընդունակությունները պայմանավորված են ընդունակության գործոնով և սովորելու ժամանակ կարևոր է ուսումնառողի մտածողությունը, աշխատասիրությունը, այլ ոչ թե նրա հիշողությունը և ուշադրությունը: Այս հայեցակարգից ելնելով՝ շատ մանկավարժներ սովորողների մտավոր ունակությունները բացահայտելու համար դիմում են թեստերի օգնությանը: 20-րդ դարում առաջին անգամ թեստեր մշակել են հոգեբան Ա. Բինեն և բժիշկ Տ. Սիմոնը, որոնք մշակել են նաև նհատուկ սանդղակ՝ առաջադիմությունը չափելու նպատակով:

Սովորողների երկու ծայրահեղ խմբեր կարելի է առանձնացնել՝ լավ մտապահողներ և վատ մտապահողներ: Նյութի տրամաբանական վերամշակման ենթարկելու ունակությունը դեռահասների մոտ հաճախ ինքնուրույնաբար է զարգանում: Նյութը բառացիորեն մտապահելու դիրքորոշումը արգելք է հանդիսանում խոսքի զարգացման ճանապարհին, հատկապես խանգարելով միտքը սեփական բառերով արտահայտելու ընդունակությունների ձևավորմանը: Անմիջական կապ գոյություն ունի ուսումնական նյութի վրա ճիշտ աշխատելու ունակության սովորողի բանականության զարգացման և իմացական հետաքրքրությունների միջև: Դրա համար թեստերի օգտագործումը շատ կարևոր դարձավ:

Անհարժեշտ է նշել, որ դասի նպատակների ու ուսումնառության վերջնարդյունքների ձևավորման դեպքում անհրաժեշտ է հստակեցնել գնահատման չափանիշները: Տարբերակումը ձևավորվում է նաև ձևավորող գնահատող հետադարձ կապից (Յու Ամիրջանյան 2005):

Համատեղ աշխատող խումբ բաղկացած է 3-6 մշտական անդամներից: Խմբի անդամների միջև կապը սերտ է, նրանք ճանաչում, ընդունում և աջակցում են միմյանց: Խմբի կազմը միատար չէ՝ մասնակիցների ընդունակությունները, սեռը, համակրանքը և էթնիկական ծագումը տարբեր են:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

3.1 Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին: Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել անհատական տարբերակված ուսուցում, ինչը կնպաստի նաև զարգացնել նրանց մոտ տեքստերի հետ ճիշտ աշխատելու հմտությունը, դառնալ ավելի ինքնուրույն և հետ չման ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում են 24 աշակերտ՝ 12 աղջիկ և 12 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Այս դասարանում գրականություն անցնում են շաբաթական երկու ժամ և դասացուցակում այն տեղադրված էր 4-րդ և 5-րդ ժամերին: Այս դասարանում ես փորձարարական դաս չեմ անցկացրել, քանի որ 6-րդ տարին է, որ այս դասարանում դասավանդում եմ «Հայոց լեզու և գրականություն» առարկաները և շատ լավ գիտեմ յուրաքանչյուր աշակերտի հմտություններն ու կարողությունները այս առարկաներից: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր վեց աշակերտների համար՝ կազմակերպել տարբերակված ուսուցում անհատական թեստերի միջոցով, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք տարբեր բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի կարողությունները և հմտությունները:

3.2 Օրվա դասը վերաբերվում է Խաչատուր Աբովյանի կենսագրությանը և ստեղծագործության ւնդհանուր բնութագրին (տե՛ս դասապլան 1, էջ 16) Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով (տե՛ս դասագիրք, առաջադրանք էջ 129/3): Բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով, որովհետև հանձնարարված էր կարդալ և գրի առնել: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ:

Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփվեց օրվա դասը, որպեսզի ստուգվեն աշակերտների ձեռք բերած գիտելիքները տվյալ նյութի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ, այնուհետև գրատախտակը բաժանվեց չորս մասի: Գրատախտակին աշակերտների միջոցով գրվեցին Մայրենի լեզվի մասին ասույթներ: Չորս աշակերտ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ: Մնացած սովորողները աշխատում էին իրենց տետրերում՝ հնչեցնելով իրենց համար անհասկանալի հարցերը, խմբային քննարկման միջոցով ստանում սպառիչ պատասխաններ:

Դասը քննարկելուց հետո վեց միջին առաջադիմության աշակերտները գրեցին տարբերակված թեստային աշխատանք (տե՛ս դասապլան 1, էջ 16) բաժանվեցին թեստային առաջադրանքները, բացատրվեց հանձնարարությունը: Աշխատանքն աշակերտներին ծանոթ էր, քանի որ մինչ այդ դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտները կատարել էին նման աշխատանքներ: Տարբերակված թեստերը երկու տարբերակով էին (ա, բ), որոնք բաժանվեցին աշակերտներին աշխատելու համար: Մնացած աշակերտների հետ դասը շարունակվեց (գրե՛լ կարճ շարադրանք «Աբովյանի դերը հայ նոր գրականության հիմնադրի գործում»): Բարձր առաջադիմությանտեր աշակերտները դասագրքից առաջադրանքի վրա (տե՛ս էջ 125) գրեցին աշխատանքային տետրերում: Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող սովորողները, քանի որ նրանք հետ են մնում ուսումնական ծրագրերից:

Տարբերակված թեստային առաջադրանքներ գրող յուրաքանչյուր սովորողի հաջորդ դասին կտրամադրվի գրավոր և բանավոր հետադարձ կապ անելիքների և կատարած աշխատանքների վերաբերյալ:

Տարբերակված թեստերը հավաքելուց հետո հաղորդվեց նոր թեմա: Նոր դասը վերաբերվում էր «Վերք Հայաստան»-ի վեպի գաղափարին ու կերպարներին:, որը հաղորդվեց աշակերտներին (ասեմ նաև, որ դասարանի մի քանի լավագույն աշակերտների նախօրոք հանձնարարված էր կարդալ վեպի բնութագիրը) կարճ դասախոսությամբ՝ ստեղծելով բուռն քննարկում վեպի շուրջ: Դասի հաղորդման ժամանակ խոսվեց ազգապահպանության, մայրենի լեզվի ու կրոնի կարևորության,

ազատության, պատվի ու արժանապատվության և ինքնապաշտպանության մասին: Սովորողները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցեր, իմ կողմից տրվեց լրացուցիչ բացատրություններ:

Դասն ավարտվեց տնային առաջադրանքի հանձնարարումով:

Կարդալ բնագրից վեպի «Հառաջաբան» հատվածը: Կազմել թեստ տրված պահանջին համապատասխան ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար, իսկ միջին ու բարձր առաջադիմություն ունեցող սովորողների համար «Վերք Հայաստանի» վեպն ամբողջությամբ և անել ծաղկաքաղ:

3.3 **Փորձարարական դաս -2**

Այսօրվա դասի թեման էր «Վերք Հայաստան»-ի վեպի կերպարները (տե՛ս դասապլան 2, էջ 18): Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող, այդ իսկ պատճառով ամբողջովին հաղորդվեց աշակերտների միջոցով, քանի որ նախապես վեպի ընցերցումը բավականին օգնեց դասաթեմայի մատուցմանը: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, ինչին հաղորդվեց նախորդ դասաժամին արված վեպի ծաղկաքաղը, դրա քննակումը:

T մեթոդով ներկայացրին վեպի գլխավոր՝ դրական և բացասական հերոսներին: Այնուհետև դրան հաջորդեց անցած դասաժամին գրված տարբերակված թեստերի քննարկումը:

Այս թեստային աշխատանք գրող երեք աշակերտ կարողացել էին հաղթահարել թեստի միայն մի վարժությունը սխալներով, իսկ վեց աշակերտ թեստը գրել էին ամբողջությամբ, բայց դարձյալ սխալներով: Դասի ընթացքում բացատրվեց բոլոր սխալները, տրվեց լրացուցիչ բացատրություն ինչպես իմ, այնպես էլ մի քանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների կողմից: Աշակերտները նշեցին, որ այս ոճի դասի անցկացումը իրենց դուր եկավ, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են, և դասի ընթացքում պաշտպանվում է սովորողի իրավունքներն ու ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը: Վառ օրինակ էր վեպի գլխավոր հերոս Աղասին, նախ այս վեպի մյուս հերոսական դրվագները սովորողների մոտ ձևավորում են սեփական իրավունքի և ազգապահպանության կարևորագույն հատկանիշներ: Սովորողները «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում ստանում են ինչպես նոր գիտելիքներ, այնպես էլ

ամբողջ դասարանով մասնակցում էին դասապրոցեսին՝ ապահովվելով ամբողջ դասարանի ներգրավվածությունը: Թեստերն հանձնելուց հետո երեխաները հայտնեցին իրենց դժգոհությունը, որ հատկացված ժամանակը քիչ էր աշխատանքը կատարելու համար:

Տարբերակված թեստերը քննարկելուց հետո հաղորդվեց նոր դաս, որը վերաբերվում է «Վերք Հայաստանի» վեպի գաղափարին և կերպարներին: Թեման լինելով բավականին մատչելի՝ այն հաղորդվեց հարցադրումների մեթոդով (տե՛ս դասապլան 2, էջ՝ 18) ինչը ևս հնարավորություն տվեց ինձ ներգրավել գրեթե բոլոր աշակերտներին դասապրոցեսի մեջ: Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով դարձյալ վեց միջին առաջադիմություն ունեցող աշակերտների բաժանվեց երկու տարբերակով տարբերակված թեստեր (տե՛ս դասապլան 2, էջ՝ 18) բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ գրվեց երկու բարդ վարժություն, իսկ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար գրատախտակին գրվեց գլխավոր հերոսի անունը: Սովորողները նրան վերագրեցին հատկանիշներ ըստ իրենց սովորածի, երկու աշակերտ գրեց կարճ շարադրանք «Աղասու կերպարը» վերնագրով: Հավաքվեցին թեստերը, հանձնարարվեց տնային աշխատանք (տե՛ս դասագիրք էջ 126):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սովորողի իրավունքների ու ազատության, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը «Գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում պաշտպանվեց, քանի որ անհատական մոտեցումը հաճախ վիրավորում էր դպրոցականի եսը և լրացուցիչ խնդիրն է առաջացնում դասապրոցեսի կազմակերպման ընթացքում: Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց երկու տարբերակված դաս, որի ժամանակ հինգ միջին առաջադիմության տեր աշակերտներ կատարեցին անհատական տարբերակված թեստային աշխատանքներ՝ երկու տարբերակներով: Ամեն հաջորդ տարբերակված թեստերի սխալները տրամադրվեցին բանավոր և գրավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հատկապես միջին և ցածր առաջադիմության տեր սովորողներին, որն է պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվելու դասապրոցեսին, ինչպես նաև նրանց տրվեց հնարավորությունձեռք բերել ինքնուրույնություն, նախաձեռնելու և ստեղծագործական ունակությունների զարգացում «Գրականություն» առարկայի ուսուցանելու ընթացքում՝ դրսևորելով աշխատելու հմտություններ (ցածր կարողության տեր սովորողներին նույնպես տրվեց առաջադրանք՝ էջ 126 (տե՛ս դասագիրք)): Երեխաները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի նպաստեց դասի արդյունավետությանը:

Վերլուծելով հետազոտական դասի վերջնարդյունքները, եկա այն եզրակացության, որ սովորողների մեջ կարողացա զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ, ապահովելով սովորողների ներգրավվածության բարձրացումը նրանց մեջ ձևավորվեց սեփական եսի բարձրացում՝ իրավունքների ու ազատ արտահայտվելու, չվախենալով սխալվելու մտքից, տպատվի ու արժանապատվության պաշտպանության դրսևորում, որոնք պայմանավորված էին հետևյալ գործոններով .

1. Տարաբնույթ տարբերակված վարժությունների կատարում տարբեր առաջադիմության տեր սովորողների համար:
2. Հարցադրումներ և տարբերակված ուսուցում մեթոդների կիրառում դասաժամերին:
3. Գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում

4. Տարբերակված թեստային առաջադրանքների լուծում և քննարկում
5. Թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական գրավոր աշխատանքների միջոցով
6. Բնութագրական կարճ շարադրանքի միջոցով թեմայի ամփոփում

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական դպրոցը առարկայական չափորոշիչ և ծրագիր «Գրականություն» 2007,
2. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ա. «Մանկավարժություն»
3. «Վերք Հայաստանի» բնութագիրը 2010
4. Դասագիքը – 10-րդ դասարան 2021թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Դ ա ս ա պ լա ն 1

Ուսուցիչ՝ Եգորյան Սաթենիկ

Առարկա՝	**Գրականություն**	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	**2**	**Դասարան**	10
Թեմա՝	Խաչատուր Աբովյանի կենսագրությունը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, գրական տետր, Աբովյանի դիմանկար, կպչուն քարտեր, գունավոր մարկերներ						
Դասի նպատակը՝	Ծանոթացնել Աբովյանի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Կարողանալ կարդալ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը - ունենալ որոշակի գիտելիքներ Աբովյանի կենսագրության վերաբերյալ - կարողանալ հասկանալ ինչու է Աբովյանը համարվում հայ նոր գրականության հիմնադիր:						

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
5-7 րոպե 35րոպե	Ներկա, բացակա տնային աշխատանքների ստուգում, Աշակերտները լսում են, մտածում տրված հարցերի մասին և պատասխանում դրանց: Փոխադարձ	Մտագրոհ է անում, տալ հարցադրումներ, ներգրավելով դասապրոցեսի մեջ: Լսում երեխաներին հեղինակի կենսագրության մասին: Տալ ուղղորդող հարցադրումներ՝ Աբովյանի դերը հայ նոր գրականության	1.Ո՞վ է Աբովյանը: 2.Որո՞նք են նրա կյանքի կարևոր դրվագները 3.Ինչու՞ Աբովյանը համարվեց հայ նոր գրականության հիմնադիր 4.Որո՞նք են նրա	Մտագրոհ, հարց ու պատասխան

	հարցեր տալ, իսկ փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող սովորողները	մեջ	բերած նորությունները	
Տնային աշխատանք **3 բոպե**	*Տնային առաջադրանքի հանձնարարում:* Համառոտ նկարագրել Խ. Աբովյանի ստեղծագործության ընդհանուր պատկերը. 1. Գրական նախափորձ 2. Ստեղծագործությունների լեզու 3. Ստեղծագործությունների ժանրեր 4. Ստեղծագործությունները միավորող ընդհանուր գաղափարը 5. Լուսավորության գործունեությունն ու ստեղծագործությունը 6. Թեմայի ամրապնդման համար կատարել անդրադարձ			

Մեթոդմիավորման նախագահ՝ _____ / /

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝ _____ / /

Դ ա ս ա պ լ ա ն 2

Ուսուցիչ՝ Եգորյան Սաթենիկ

Առարկա՝	Գրականություն	Ամսաթիվ		Կիսամյակ	2	Դասարան	10
Թեմա՝	Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գաղափարը։						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, գրական տետր, վեպի բնութագրի, նկրներ, կպչուն թղթեր։						
Դասի նպատակը՝	• Կարդալ և ընկալել կարդացածի ենթատեքստը • Գաղափար տալ վեպի գրության շարժառիթների, քննարկվող խնդիրներ, պատկերվող դարաշրջանի պատմական հիմքի մասին։						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	• Ներկայացնել վեպի գաղափարային բովանդակությունը • Ունենալ որոշակի գիտելիքներ վեպի գաղափարի, Աբովյանի բերած նորությունների մասին • Գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը։						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
Ներկա, բացակա Տնային աշխատանքի ստուգում	Բացում են դասագիրքը, վերհիշում կարդացածը։ Պատասխանում հարցերին։ Աշակերտները պատմում են հանձնարարված նյութը, քննարկում խմբով։ Ներկայացնում են աշխատանքը՝ թերթիկի վրա գրում են՝ ինչ սովորեցի, ինչ հասկացա և հանձնում։	Մտագրոհ է անում թեմայի վերաբերյալ, հիշեցնում է անցածը, լսում կարծիքներ։ Բացատրում է հանձնարարությունը, հետևում քննարկումներին, օգնում դժվարացող սովորողներին։	• Վեպի «Հառաչանք»-ից դուրս բերել Աբովյանի խոսքերը։ • Պատմական ի՞նչ իրադարձություն է ընկած վեպի հիմքում • Ո՞րն է վեպի գաղափարը։	Հարցադրումների մեթոդ Քառաբաժան մեթոդ Տարբերակված թեստ
Տնային աշխատանք	«Հայոց լեզվի դերը ազգապահպանության հարցում» կարճ շարադրանք։ Առաջադրանք էջ 126 /տե՛ս դասագիրքը/։			

Մեթոդմիավորման նախագահ՝ _____/ /

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝ _____/ /

ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ

Առարկա – Հայոց լեզու

Դասարան – VII

Թեմա – Խաչատուր Աբովյան

Տևողությունը՝ 45 րոպե

Հարցերի քանակը 9 /10միավոր/

Գնահատման չափանիշները

1-ին հարցը գնահատվում է 2 միավոր

Մնացած հարցերը՝ 1-ական միավոր,

Յուրաքանչյուր սխալի համար միավորից հանվում է 0,25 միավոր

1. Ո՞ր թվականին է ծնվել Խաչատուր Աբովյանը

_____

2. Աբովյանը որտե՞ղ էր աշխատում որպես գրագիր ու թարգման:

ա) Դորպատում գ) Երևանում

բ) Թիֆլիսում դ) Էջմիածնում

3. Աբովյանը որտե՞ղ է ստացել իր նախնական կրթությունը:

_____

4. Թիֆլիսի նորաստեղծ ո՞ր դպրոցի առաջին սաներից էր Աբովյանը:

ա) Ներսիսյան գ) Գևորգյան

բ) Հռիփսիմյան դ) Գայանյան

5. Պարույրը ի՞նչ խոստացավ Աբովյանին Էջմիածնում

ա) ապահովել ընթերցանության գրքերով բ) աշխատանքի տեղավորել

գ) ամուսնացնել դ) օգնել՝ կրթությունը շարունակել

6. Քանի՞ տարեկան էր Աբովյանը Արարատ բարձրանալիս

---

7. Աբովյանի ո՞ր ստեղծագործության ենթավերնագիրն է «Տարերք արդի հայերենի».

ա) «Առաջին սեր»

բ) «Վերք Հայաստանի»

գ) «Պարապ վախտի խաղալի»

դ) «Նախաշավիղ կրթության»

8. Աբովյանն իր կենդանության օրոք ո՞ր ստեղծագործությունն է հրապարակել

ա) «Վերք Հայաստանի»

բ) «Առաջին սեր»

գ) «Նախաշավիղ կրթության»

դ) «Պարապ վախտի խաղալի»

9. Աբովյանը ե՞րբ դուրս եկավ տնից և չվերադարձավ